ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**2012Թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «2012Թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 7 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012Թ. ՄԱՅԻՍԻ 11-Ի N37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃՈՎ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ սահմանադրական դատարանի 15.06.2012թ. ՍԴԱՈ-35 աշխատակարգային որոշմամբ կասեցվել էր սույն գործի վարույթը և պահանջվել պետական իրավասու մարմիններից /ՀՀ գլխավոր դատախազությունից, ՀՀ վարչական դատարանից և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից/ սահմանադրական դատարանին տրամադրել համապատասխան նյութեր ու տեղեկատվություն: Նկատի ունենալով, որ նշված պետական մարմիններից ստացվել են /18, 20, 22 և 27.06.2012թ./ պահանջված փաստաթղթերը և սահմանված կարգով տրամադրվել սահմանադրական դատարանի անդամներին, դիմող ու պատասխանող կողմերին, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի պահանջները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

Վերսկսել «2012թ. մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի դիմումի հիման վրա՝ «2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի N37-Ա որոշման հետ կապված վեճով» գործի վարույթը՝ 2012 թվականի հուլիսի 3-ին, ժամը 10.00-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 հունիսի 2012 թվականի
ՍԴԱՈ-36